ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«27» փետրվարի 2024 թ. № 222

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԵՐՄԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ ՅԱՐՄԱԼՈՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇԳՐՏՎԱԾ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքում գտնվող 06-006-0502-0053 կադաստրային ծածկագրով 0,00200 հեկտար մակերեսով հողամասի 1/2 մասը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2022 թվականի սեպտեմբերի 14-ի վկայագրի (գրանցված է սեղանամատյանում N 2394) փոխանցվել է Հերմինե Ալբերտի Յարմալոյանին, հիմք ընդունելով «Տարոն Սերոբյան» Ա/Ձ-ի կողմից տրամադրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, և Հերմինե Ալբերտի Յարմալոյանի դիմումը (ծնված՝ 17.04.1969թ.)՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, Հերմինե Ալբերտի Յարմալոյանին ժառանգաբար փոխանցված բնակավայրերի նպատակային նշանակության 0,00200 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը:
2. Սույն որոշումը տրամադրել Կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. փետրվարի 27
ք.Սպիտակ